

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԵՏԻ ՑՈՒՑՈՒՄ

№ 1

ԱՀ առողջապահության նախարար
Արարատ Օհանջանյանին

պատճենը՝ Արցախի Հանրապետության
ոստիկանության պետ
Աշոտ Հակոբջանյանին

Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի ապրիլի 13-ի N 1 որոշման 2-րդ և 4-րդ կետերի պահանջների լիարժեք կատարումն ապահովելու համար անհրաժեշտ է Արցախի Հանրապետության տարածք մուտք գործող բոլոր այն անձանցից, ովքեր պարետի նույն որոշման պահանջներին համապատասխան պետք է ներկայացնեն իրենց վերաբերյալ երեք օրից ոչ ավելի վաղեմության պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) թեստի պատասխանը, պահանջել թեստի պատասխանի թղթային տարբերակը և լիարժեք հետազոտությամբ հավաստիանալ դրանց իրական լինելու (այս կամ այն եղանակով կեղծված չլինելու) մեջ:

Թեստի պատասխանի իսկության մեջ կասկածներ առաջանալու դեպքում անհրաժեշտ է դրա մասին գրությամբ հայտնել Արցախի Հանրապետության ոստիկանությանը՝ համապատասխան ստուգումներ իրականացնելու և հիմքերի առկայության դեպքում քրեաիրավական գնահատական տալու համար:



Ժիրայր Միրզոյան